քը չպիտի դանդաղէ մատուցանել ի պատիւ Ս. Մեսրովբայ, և յիշեալ նպատակի նպաստելոյ և նուիրաբեր դառնուելոյ փափագողք կարեն իւրեանց կամաւոր նուէրները ուղղել յանուն Սինոդի Սրբոյ Էջմիածնի։ Երգէն Հայազգի ժողովուրդք նոյն գիւղի բաւական նուէր ստորագրած են ի ժապաւինեալ յատուկ տումարին, որ յանձնուած է Հոգաբարձութեան շինութեան։ Նաև Գ. զլաբ քաղաքացի Մեծապատիւ Եղդասէր Մահտեսի Նասայի Իզմիրեան առաջարկութեամբ Վ. Հ. Հայրապետի՝ գրուեցաւ 500 բուբլի, որում արժանի գովութիւնը և շնորհակալութիւնը կ՚փութամք մատուցանել հրապարակաւ Երարատ ամսագրոյս միջոցաւ։

Այնպէս կը գրուատեմք Օշական գեղջ ջերմեռանդ ժողովրդեան եռանդը՝ հանդերձ գոհունակութեամբ, և անշուշտ եմք՝ զի նոքա ինչպէս դրամական նուիրաբերութեամբք նպաստամատոյց կլինին, նոյնպէս և այլ կարևոր միջոցներով շինութեան օգնել երբէք չպիտի դանդաղին։

ՁԵՌՆԱԴՐՈՒԻԼ ՄԱՆԿՈՒՆԻՈՑ.

Ի 15ն ամսոյս՝ ի Վանս Հաւիճոյ՝ Վ. Հ. Հայրապետն ամենայն Հայոց՝ իւր ձեռնասուն աշակերտ Ստեփան Մանկունոյ Պրուսացւոյ,—որ 1868ի երորդ քառորդէն հետէ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի Տպարանի Տեսչի և Տնօրինի պաշտօնները կվարէ և Տպար. Ժողովոյ Անդամ է, — բարեհաճեցաւ շնորհել կիսասարկաւագութեան և Աւագ սարկաւագութեան աստիճանները, և ի յաջորդ աւուրն ի Պիւրակէի ձեռնադրել կուսակրօն Քահանայ՝ կոչելով զանունն Վահրամ։

Իսկ յերեկոյեան ժամուն ետ վեղար Աբեղայութեան։

Խարտաշիլակն ինչպէս և Պիւրակէ աւուր Պատարագիչն էր Գ. Գ. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց Փոխանորդն Աղեքսանդրապոլ քաղաքի։

ՆՈՒԷՐ.

Նոր— Նախիջևանի Սարգիս Քահանայն Մաքսրմաձեանց՝ իւր աշխատասիրած Հայոց համառօտ Քերականութենէն հարիւր օրինակ նուիրած է յօգուտ Նորաշէն Ս՚ԵՄարանի Մայր Աթոռոյս, որոյ համար կ՚յայտնեմք մեր շնորհակալութիւնը։

Նոր—Նախիջևանի Հայոց Մարդասիրական ընկերութիւնը յատուկ յայտարարութեամբ յանուն Վ. Հ. Հայրապետի խնդրած է հրատարակել հետևեալ հաշիւը անցեալ 1871 ամին ընդ կարգադրութեան Ընդհ. Ժողովոյն,

ՀԱՇԻՒ

Մարդասէրական Ընկերութեան Հայոց Նոր Նախիջևանի վասն 1871 ամի։

Մարդասիրական Ընկերութեան Հոգաբարձուաց Խորհրդարանն համաձայն ԺԵ. յօդուածոյ Կանոնադրութեան իւրոյ՝ պատիւ ունի առաջի առնել Ընդհանուր ժողովոյ անդամոց ընկերութեան, անցեալ 1871 տարուայ մէջ ունեցած մուտքն և ելքն։

Մ—պ։

Որպէս տեսանի Ընկերութեանս հաշուամատեանէն նախընթաց 1871 ամի սկիզբն ընկերութեանս դրդրամագլուխն էր 6142 ռ. 88 կ.

—. ։

Ցընթացս 1871 ամի գոյացեալ են մուտք.

—. Ի 164 անդամոց ընկերութեանս տարեկան բաժանորդագինք յիւրաքանչիւրոց 6. ռ. արծաթոյ 984

բ. Տարեկան տոկոսիք տասն տոմսակաց առաջին ներքին փոխառութեան . . 50

գ. Տոկոսիք հինգ պանքական 5 % տոմսակաց 22 50

դ. Ի մեծարոյ անդամոյ Ընկերութեանս ի Միքայէլէ Տէր Պողոսեան Կարապետեանց նուէր 25

ե. Ցերկուց նախանձաւոր անդամոց Ընկերութեանս, ի Տփխիսեցի Ցակոբայ Խօճայնաթեանց և ի Սանիփանոսէ Գրիգորեան. 12

զ. Արդիւնք պատրաստական դրամագլխոյն, օժանդակութեամբ Հոգաբարձուաց Խորհրդարանիս և անդամոց Ընկերութեանս Պ. Գէորգայ Խօճայեանց 789 75

է. Տարեկան թոշակք տասն թոշակաւոր աշակերտաց և տասնամսեայ թոշակ միոյ աշակերտի, ընդ ամենն . . 1625.

ը. Ի կառավարչէ վանուց սուրբ Խաչի ստացեալ է համաձայն կարգադրութեան Սրբազան Առաջնորդին Վիճակիս վասն մենդեան ձրիավարժ աշակերտաց ժառանգաւորաց դպրոցի . . 600

Բոլոր մտից գումարն է 4108 25

Իսկ ընդ ամենն մտից գումարն հանդերձ նախընթաց տարւոյ սկիզբն եղած դրամագլխովն է 10251 13

Ելոյն գրոց-ոյ մէջ եղած ծախքն են

—. Ուսուցչաց ժառանգաւորաց դպրոցի հատուցեալ է տարեկան ռոճիկ . 850

բ. Վասն հանդերձեղինաց տասն ձրիավարժ աշակերտաց նոյն դպրոցին . 340

գ. Վասն գրենից, թղթոց և այլ կարևոր դասական պիտոյից նոյն դպրոցին 86

դ. Վասն նորոգութեան սենեկաց դպրոցին և վառարանաց ի նոսին. . . 217 65

ե. Ծառայից, խոհարարի և լուացարարի յիշեալ դպրոցին հատուցեալ է տարեկան ռոճիկ 408

զ. Վասն մենդեան բոլոր աշակերտաց դպրոցին և միաբանից սուրբ խաչի վանուցն և ծառայից յընթացս տարւոյն 1179 42

է. Տարեկան ռոճիկ գործավարի և ծառայի խորհրդարանիս, ևս և գին տպագրութեան հաշուացուցակի ընկերութեան, 1870 ամի և այլ կարևոր ծախք խորհրդարանիս յընթացս տարւոյն . 182 40

Բոլոր ծախուց գումարն է 3263 67

Զորս ի բաց հանելով ի գումարէ տարեկան մտից՝ յաւելանայ 844 ռուբ՝ 78 ք. որով ընդհանուր դրամագլուխ Ընկերութեանս հանդերձ վերոյիշեալ պանքական և ներքին փոխառութեան տոմսակօք լինի առ 1 Ցունվարի ներկայ 1872 տարւոյս 6987 66

Ընկերութեանս գումարաց տարեկան հաշիւք ներկայացնելէն յետոյ, Խորհրդարանս հարկ կհամարէ նաև մասնաւոր տեղեկութիւն տալ ընդհանուր ժողովոյդ՝ ժառանգաւորաց դպրոցի վրայոյ։

Ա. 1871 տարւոյ մէջ ժառանգաւորաց դպրոցը ունէր չորս վարժապետ, մին՝ Կրօնուսոյց, երկրորդն՝ Հայերէն և Գաղղիերէն լեզուաց, երկրորդն՝ Ռուսերէն լեզուի և Թուաբանութեան, և չորրորդն՝ Աշխարհագրութեան, Հայոց և Ընդհանուր պատմութեան և գեղագրութեանց։

Բ. Թոշակաւոր աշակերտաց թիւն էր, ի վերջ տարւոյն 11, իսկ ձրիավարժից, որ որդեգիրք կըհամարուին Ընկերութեանս,—10։ Տարւոյն վերջը Խորհրդարանս, ըստ միջնորդութեան Վանահօր սուրբ Խաչի վանուցն, կարգադրեց նաև ընդունել ի Ժառանգաւորաց դպրոցն՝ վանքի մօտ եղած աղարակի բնակչաց որդիքը, իբրև երթևեկք, թուով 9 հոգի, որով բոլոր աշակերտաց թիւը ներկայ տարւոյս սկիզբն եղաւ և է այժմ 30։

Գ. Դպրոցի Հոգաբարձուաց տուած տեղեկութիւններէն կերևի, որ վարժապետք դպրոցին և մանաւանդ վերատեսուչ Նորին Արժանապատիւ Մամբրէ վարդապետն Սանասարեանց, առաւել սիրով և ջանիւք կրկատարեն իւրեանց պաշտօնը և աշակերտք բաւականին յառաջադիմութիւն ցոյց տուել են, գրէթէ ամեն առարկայի մէջ, յորմէ կարելի է յուսալ թէ այս ժառանգաւորաց դպրոցն օրէ օր յառաջ երթալով և զարգանալով՝ պիտանացու եկեղեցականներ պատրաստէ աշակերտաց մէջէն և նպաստամատոյց լինի ազգիս կարևորութեանց։

Դ. Ժառանգաւորաց դպրոցի աշակերտաց շատնալուն պատճառաւ, նեղ կուգան վարժարանի սենեակները՝ դասարանաց և ննջարանաց համար, վասն որոյ անհրաժեշտ հարկաւորութիւն կայ՝ անոնք մեծցնելու և պէտքս փոփոխութիւններ անելու։

Ե. Վերոյիշեալ հաշուէն կտեսնուի, որ ընկերութեանս իսկական տարեւոր մուտքն է (ի բաց

հանելով թոշակաւոր աշակերտաց թոշակքն և վանքի կառավարչէն ստացուած ձրիավարժ աշակերտաց անդամքին)— 1883 ռուբլի 25 քոպէկ, յորոց 470 ռուբլի 82 քոպէկ միայն, այսինքն չորրորդ մասն տարեկան արդեանց ըստ յօդուածոյ կանոնադրութեան պիտի անցնի անշուշտ ի պատրաստական դրամագլուխն։ Այլ որովհետև յաւելեալ գումարն եղեալ է 844 ռուբլի 78 քոպէկ վասն որոյ Խորհրդարանս կընդրէ յընդհանուր ժողովոյ անդամոց, որ զ470 ռուբլի 82 քոպէկ հաշուելով ի պատրաստական դրամագլուխն, զմնացորդ 373 ռուբլի 96 քոպէկ՝ իրաւունք տալ Խորհրդարանիս՝ ի գործ դնել վասն ծախուց վերոյիշատակեալ նորոգութեան։

Զ. Ընկերութեանս կանոնադրութեան գործադրութեան չորսամեայ փորձէն կերևի, որ մասնաւոր թերութիւններ կան մէջը, և Խորհրդարանս հարկաւոր համարելով թէ պէտք է ուղիղ և լրացուցանել թերութիւնները՝ ընկերութեանս ապագայ բարւոք ընթացից համար, խնդրէ յընդհանուր ժողովոյ անդամոց կազմել յանձնաժողով մի ընկերութեանս անդամոց մէջէն՝ պակասութիւնները ուղղելու, որպէս զի ընդհանուր ժողովը համաձայն յօդուածոյ նոյն կանոնադրութեան հաստատեալ առաջի արասցէ Վեհափառ Կաթողիկոսին ազգիս ի հաստատութիւն։ Եւ Է. ի վերջ ամենայնի Խորհրդարանիս Հոգաբարձուաց երկամեայ ծառայութեան ժամանակը լրացած լինելով հարկ է համաձայն Ժ. յօդուածոյ կանոնադրութեան ընկերութեանս ընտրել նոր Հոգաբարձուս, ուստի Խորհրդարանս խնդրէ այժմէն ընտրութիւն առնել նոյն պաշտօնի համար նոր Հոգաբարձուներ երկամեայ ժամանակաւ։

(ԸՆԴ ԻՆՔՆԱՆԻՆ ՀԱՄԱՐԱԿ)

ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ Ի. ԱՊԵՔԵԱՆՈՍԵԱՆՑ

ԱՄՐՓՈՓՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ։

Ի 4 Ապրելի 1872 ամի, մեք ի ներքոյ ըստորագրեալքս անդամք Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր Նախիջևանի ժողովեալ ի միասին վասն վերահասու լինելոյ մեր ի ծախուց եղելոց յընթացս 1871 ամի գտաք. Ա. ընկերութեան մատեանները ի գործ դրուած են կանոնաւոր եղանակաւ ըստ պահանջման կարգին։ Բ. տասն տոմսակներն առաջին ներքին փոխառութեան ի գումարն 1300 ռուբլեաց, հինգ պանքական տոմսակքն ի գումարն 500 ռ. և յաւելեալ պատրաստի գումարն 5187 ռուբլի 66 քկ. գոտանին ամբողջ առ զանձապահն Ընկերութեան։ Գ. Առաջարկել Հոգաբարձուաց Խորհրդարանի Ընկերութեան, որ ժառանգաւորաց դպրոցի և այլ կարևոր պիտոյից համար ի գործ դնեն ներկայ 1872 տարւոյս մէջ հիմնական և պատրաստական դրամագլխոց և անդամոց բաժանորդագնոց և կամաւոր Նուիրատաց չորս մասին երեք մասն համաձայն կանոնադրութեան Ընկերութեանս, և անցեալ 1871 տարւոյ ծախքէն յաւելեալ 373 ռուբլի 96 քպ. արծաթն ի գործ դնել ժառանգաւորաց դպրոցի սենեակներու նորոգութեան և այլ դպրոցին համար կարևոր պիտոյից։ Դ. Առաջարկել Հոգաբարձուաց Ընկերութեան՝ կանոնադրութեան մէջ եղեալ թերութիւնները ուղղել և ապա առաջարկել ի վերահասութիւն Ընդհանուր ժողովոյ անդամոց ընկերութեան։ Գ. Մեծապատիւ Գէորգայ Գարրիէլեան Խոճայեանց՝ անդամոյ ընկերութեանս յայտնել ի բերանոյ համօրէն անդամոց Ընկերութեանս լիուլի շնորհակալութիւն վասն հազուագիւտ բարեգործութեան նորա յօգուտ ընկերութեանս, որով ձեռնտու եղեալ է նա արդիւնաւորութեան պատրաստական դրամագլխոյն։ Դ. Առաջարկել նորոգ ընտրելի Հոգաբարձուաց ժառանգաւորաց դպրոցի տնտեսական մասին մէջ եղեալ թերութիւնքն ուղղել, առնելով դայն կամ իւրեանց վերայ, կամ թողլով զայն վանքական կառավարութեան ձեռքը։ Ե. Ընտրել (որ և ընտրեցան) Հոգաբարձու Խորհրդարանի ընկերութեանս Խաչատուր աւագ քահանայ Զարիֆեանց, Եպիփան Պողոսեան, Յովհաննէս Սաղթիքեան, Մարտիրոս Կաճաղեան, Սարգիս Խաչեան, Կարապետ Բաժելիքեան, Կարապետ Ճիվիլեկեան, Նիկողայոս Ադեմեան, Մարկոս Կաճաղեան, Խաչատուր Ստեփաննոսեան, Մինաս Պալասանեան և Պարոն Պաթրիարեան։ Զ. Նախկին Հոգաբարձուաց Խորհրդարանի ընկերութեանս յայտնել շնորհակալութիւն՝ իւրեանց պարտաւորութիւնը սիրով և ջերմեռանդութեամբ կատարելնուն պատճառաւ։ Եւ Է. Այս կարգադրութիւն ընդհանուր ժողովոյս հանդերձ հաշուով 1871 ամի տալ տպագրել վասն ընդհանուր տեղեկութեան։

ԸՆԴ ԻՆՔՆԱՆԻՆ ՀԱՄԱՐԱԿ Է

ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ Ի. ԱՊԵՔԵԱՆՈՍԵԱՆ.

ՀԱՇԻՒ

ՄԱՐԻՍՏԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԳՊՐՈՑԻՆ ԳՈՐԾՈՅ.

(ԱՆՏԵՍ ԲՈՒԼԻՆ ՏԱՅՈՐԴ)

Առաջին տարում 1870ին նախ քան զբացումն ուսումնարանի ոչ ոքից օգնութիւն և դրամական օժանդակութիւն չունէր ուսումնարանը, բաց ի եր-